Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

14.01. 2019թ. ք. Վեդի

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արարատի մարզային բաժնի Վեդու բաժանմունքի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր՝ Հ. Պետրոսյանս ուսումնասիրելով 18.12.2018թ վերսկսված թիվ 03815571 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 28.09.2017թ. տրված թիվ ԵԿԴ/1093/17/16 կատարողական թերթով պետք է Արսեն Մարատի Գասպարյանից հօգուտ «Արդշիբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 2.162,32 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, 25.000 ՀՀ դրամ և կատարողական թերթով սահմանված տոկոսները, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածի 2-րդ մասի «ա» կետով 5 տոկոս կատարողական գործողությունների կատար'ողական ծախսի գումար:

Բռնագանձումը տարածելով գրավադրված ոսկյա իրերի վրա:

Կատարողական թերթի պահանջը կատարելու համար անհրաժեշտ է բռնագանձումը տարածել Արսեն Մարատի Գասպարյանի կողմից «Արդշիբանկ» ՓԲԸ-ում գրավադրված ոսկյա զարդերի վրա:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասի» ՀՀ օրենքի 28, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան Արսեն Մարատի Գասպարյանին պատկանող գրավադրված ներքոհիշյալ ոսկյա զարդերը՝

հ/հ	*լոտի անվանումը նկարագիրը*	*գնահատման գինը*	*մեկնարկային գինը*	**գույքի քանակը**
1	*Մատանի 2.4 գրամ, 580 հարգի*	*26.400 ՀՀ դրամ*	*19.800 ՀՀ դրամ*	*1հատ*
2	*Մատանի 2.0 գրամ, 500 հարգի*	*17.000 ՀՀ դրամ*	*12.750 ՀՀ դրամ*	*1հատ*
3	*Մատանի 2.8 գրամ, 560 հարգի*	*29.680 ՀՀ դրամ*	*22.260 ՀՀ դրամ*	*1հատ*
4	*Մատանի 2.0 գրամ, 560 հարգի*	*21.200 ՀՀ դրամ*	*15.900 ՀՀ դրամ*	*1հատ*
5	*Մատանի 3.0 գրամ, 580 հարգի*	*33.000 ՀՀ դրամ*	*24.750 ՀՀ դրամ*	*1հատ*
6	*Մատանի 2.0 գրամ, 580 հարգի*	*22.000 ՀՀ դրամ*	*16.500 ՀՀ դրամ*	*1հատ*
7	*Մատանի 2.2 գրամ, 580 հարգի*	*24.200 ՀՀ դրամ*	*18.150 ՀՀ դրամ*	*1հատ*
8	*Մատանի 2.8 գրամ, 580 հարգ*	*30.800 ՀՀ դրամ*	*23.100 ՀՀ դրամ*	*1հատ*
9	*Մատանի 3.8 գրամ, 580 հարգ*	*41.800 ՀՀ դրամ*	*31.350 ՀՀ դրամ*	*1հատ*
10	*Ականջող 2.3 գրամ, 580 հարգ*	*25.300 ՀՀ դրամ*	*18.975 ՀՀ դրամ*	*1զույգ*
11	*Ականջող 4.2 գրամ, 580 հարգ*	*46.200 ՀՀ դրամ*	*34.650 ՀՀ դրամ*	*1զույգ*
12	*Շղթա 9.6 գրամ, 580 հարգ*	*105.600 ՀՀ դրամ*	*79.200 ՀՀ դրամ*	*1հատ*
13	*Շղթա 1.7 գրամ, 580 հարգ*	*18.700 ՀՀ դրամ*	*14.025 ՀՀ դրամ*	*1հատ*
14	*Թևնոց 5.8 գրամ, 580 հարգ*	*63.800 ՀՀ դրամ*	*47.850 ՀՀ դրամ*	*1հատ*
15	*Թևնոց 1.4 գրամ, 500 հարգ*	*11.900 ՀՀ դրամ*	*8.925 ՀՀ դրամ*	*1հատ*
16	*Թևնոց 6.8 գրամ, 580 հարգ*	*74.800 ՀՀ դրամ*	*56.100 ՀՀ դրամ*	*1հատ*
17	*Շղթա 16.0 գրամ, 580 հարգ*	*176.000 ՀՀ դրամ*	*132.000 ՀՀ դրամ*	*1հատ*

ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ www.harkadir.achurd.am միջոցով: Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 04.03. 2019թ

Որոշման պատճենը ուղարկել կողմերին

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարան կամ վերադասության կարգով, որոշումը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5–րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ծ Ա Ն Ո Թ Ա Ց Ն Ե Ր Ի Ն. *Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:*

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի 10% (տասը) տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Եթե պարտապանն ունի այլ գույք, ապա լոտի մեկնարկային գինը տասներորդ հարկադիր աճուրդից հետո հաջորդ աճուրդներում չի իջնում: Եթե պարտապանը չունի այլ գույք, ապա հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային 'պգինը չի իջնում քսաներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն, երկրորդ և յուրաքանչյուր աճուրդից հետո, լոտը (գույքը) չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտելուց հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում, իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու՝ այդ աճուրդի մեկնարկային գնով : Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո, երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի /լոտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ավագ հարկադիր կատարող *Հ.Պետրոսյան*

ստորագրություն